29. ԿՈՐ ՊԱՌԱՎ

Կէլնի մեյ խա մարթ, մեկ կնիկ ունի, մեյ տղա:

Կնիյ կմեռնի, կմնաւ խեր, տղա: Խեր կէլնի լաճ կտնի ուսթա: Ուսթեն էլ կնիյ ի:

Ուսթեն կասի. - Կնաւ քյո խորն ասա, թո· կյա զիկ առնի:

Լաճ կուգյա խոր կասի. - Բաբո, իմ ուսթեն առ:

- Չէ, - կասի, - որդի, քյո մոր սոլեր կախեր եմ պատիյ, որ օր որ ծայվավ՝ նոր ես կիսայվեմ:

Էն մեկել օր կերթա ուսթին կասի: Կասի. - Իմ խեր կասի. «Քյո մոր սոլեր կախեր եմ պատիյ. որ օր ծայվավ՝ նոր ես կվսայվեմ»:

Կասի. - Տղա, որ կերթաս տուն, շիշ տիր թոներ, խորոտ կրայցու, տիր վեր սոլին, թո ծայվի:

Լաճ տուն կերթաւ, շիշ կտնի թոներ, տնի վեր սոլին, սոլ կծայվի:

Խերն իրիկուն կուգյա, լաճ կվազի տեմ:

Կասի. - Բաբո, սոլեր ծայվեր ի, արի երթանքյ իմ ուսթեն առ:

Կասի. - Որդի, փարչն էլ եմ կախե պատեն: Էն փարչ որ օր ինգյավ պատեն, կոտրավ, էն օր կիսայվեմ:

Էն մեկել օր էլմ կերթա ուսթին կասի: Կասի. - Բալամ, կնաւ փեստով զար, կոտրի, լիս տակ, ասա՝ ինգյե կոտրե:

Իրիկուն էլմ խեր կուգյա, լաճ կվազի տեմ, կասի. - Բաբո, փարչն էլ ի կոտրե:

Կասի. - Բալամ, քյո մուր քյո ճակատ, առնեմ, խո առնեմ:

Կէլնի լաճու ուսթեն կառնի: Ամիս մ'էրկու կմնա, չի մնա, կէլնի կպնի խոր յախեն, կասի. - Էսա տղեն պիտի տանես, կուրուսցուցես:

Կէլնի մածնի իրսներ կգյիղնա, կուտի, կասի. - Գյողն էն ի, չպիտի մնա մեչ տան:

Ծատ որ կասի, խոր ջանին կխասնի, կասի. - Կնիկ, էլի կըտում խաց թխի, տանեմ կուրուսցուցեմ քյու դաւրդեն:

Կնիյն ի, կէլնի շոր կլոճ կթխի, խեր կառնի լաճ, կերթա: Խաւ կլոճ կուտա, լաճն կուտի, լաճ կծարվընա: Ճամբախ լաճ կխարցուցի, կասի. - Բաբո՛, էսա ո՞րտեղն ի, կերթանքյ:

Կասի. - Բալամ, էրթանքյ խեմ որտեղ հ'ախպյուր կա:
Կէրթան, կէրթան, վեր տարիմ կնստեն:
Լաճ կասի. - Դե՛ բաբո, ես ծարավ եմ:
Կասի. - Բալամ, էլի՛ էսա պապաճիյն կլորեմ, տարիյ էրթա տակ, որտեղ որ էրթա, ախպյուր էնտեղն ի, ճյուր խմի, արի:
Լաճն ի, կէրթա պապաճկի խետ, ախպյուր կկընդընի, ճյուր կխմի, տառնա խաղալով, ծաղիյ քյաղելով կուգյա: Կուգյա, կտիսնա որ խեր կոռ տընգյի, կոռտիկ թալե վերեն, թողի կնայե:
Տղեն ի, կնստի էնտեղ, կուշտ կբոռա, կասի. «Կոռ կա, կոռտիյ կա, բաբոն չկա՛, կոռ կա, կոռտիյ կա, բաբոն չկա՛»:
Շատ կուլա, քիչ կուլա, էնտեղ քյուն կտանի, կքյընի:
Մարդակեր պառվու խովիվ, առե ոխչար էկե էնտեղ, արածալու: Շներ որ իսա լաճուն կտիսնան, խաճելով կվազեն վերեն, քիչ կմնա, որ ճըղճըղեն: Խովիվ կվազի, տիսնա որ ի՞նչ, լաճըմ գյեռ դա, պառկեր ի:
Կխանի վիր, կասի. - Տղա, տյու ընչի՞ ես իկե էսատեղ:
Կասի. - Իմ խեր զիկ իպե իթող էստեղ, կնայ:
Էն խովիվն էլ, վերի քոշ կէլնի: Ուր սրտի հ'առաճ ահագին մազ կէլնի: Էտա տղեն կտաթուրի մեչ մազերայ, կառնի կէրթա խետ ոխչրներայ տուն:
Պառավ կուգյա տեմ, կասի. - Վերի, քյենե մարթ մարդախոտ կուգյա:
Կասի. - Ասպած քյո տուն ավրի, մարթ տյու կուտես, մարդախոտ քյենե կուգյա:
Պառավ կէլնի կէրթա, կթոյ կտանի, ոխչրներ կկթի: Ճոչ տաշտըմ կտնի էնտեղ, հա կկթի, կլցի հ'ինե:
Խովիվ լաճուն կասի. - Սկա ես ճոչ դաստեմ խայ կբիրեմ, կտել մեչ էսա կաթին, կտել մ'էլ կուրամ քյու ծեռ:
Էն պառվու մեկ աչք կոր կէլնի:
Կասի. - Էն կոր աչիչ յան նստի, քիչըմ կաթ կե, տարցի կտելի պոչ խճի պառվու քյիթ, պառավ կտոռըգտա, խետ որ կտոռըգտա չլտվի, տտվի մեչ կաթին:
Լաճն էլ ըսկուն կանի: Խետ որ պառավ կտոռըգտա, լաճ կտտվի մեչ կաթին, պառավ կխասնի վերեն, որ ուտի:
Քոշն կասի. - Յա՛, յա՛, ասպած քյո տուն ավրի, ի՞նչ կանես, քյո պնչեն թռավ քյո տղեն ի, ի՞նչխ կուտես:
Կասի. - Որ իմ տղեն ի, թո գյա կայնի երդսի տակ, ես շռեմ վերեն, որ չկնայ գյլեռխվիր, էն իմ տղեն ի:
Լաճ կպուպուզի երդսի տակ, պառավ կէլնի վեր երդսին, խետ որ կշռի, խովիվ կխասնի լաճուն, կքյաշի էսադիխ:
Կէճնի տայկ, տեսնա, որ լաճ դա՛ն ի, կասի. - Խա, իմ լաճն ի:
Առատուն կէլնի, խովիվ էլմ ոխչրներ տանի արածալու, լաճուն կապսպրի, կասի. - Ես որ էրթամ, էն կուտա քյե գյլեռխ աչքել, էնոր

գյլեոխ հմեն պապուկ ի, կարիճ ի, չէլնի ասես՝ ամա՜ն, էս ի՞նչ ի, համան քյադի, թա՛լ:

Կասի. - Ինոր ակընչի իրն խանգյիրցըմ կա, էն որ կբաշլայի քյո գյիքյ քյնել, դյիւ ե՛ուշիյմ խանգյիրց արցկի, պալնիսն առ, տրոներ պաց, աման որ երթալու կէլնես, ինչ կանդար աման կա, կործես:

Լաճն ի, կուգյա, գյլեոխ կդնի գյոքյ, կասի. - Սե խատ աչքի:

Լաճ նստի, գյլեոխ կաչքի, ինչ կանդար պապուկ, կարիճ կա, գյլխուց կխանի, կթալի:

Պառավ կասի. - Խա, վալա, էս իմ տրղեն ի: Իսկի չի գզվաց իմ գյլխուց, մե խա քյնեմ:

Որ տիսնա պառավ կքյընի, ի՛ուշիյմ խանգյիրց կարցկի, պալնիս կխանի, ի՛ուշիյմ պառվու գյլեոխ կտնի գյեստին, կէլնի վե:

Կերթա ինչ կանդար աման կա, բիթուն կկործի, տուտ կպանա, կտիսնա որ ի՞նչ. ոսկի գյուտ, ոսկի գյարին դան տրուկ, խրեղեն ծի մ'էլ կապուկ էնտեղ: Ծին որ էտա լաճուն կտիսնա, կասի. - Ծո, խողածին, խավյքն ուր թնով, օցն ուր պորտով էսա տեղ չէր իկե, տյու ի՞նչխ էկար էսա տեղ: Ամա՜ն, էսա քյառսուն տարի, էսա անխոգյին զի պերե կապե էսատեղ: Զի ագատի էսոր ծեռնեն:

Լաճն ի, ուր ճկոթ ուր բրչում կթաթղի մեյ գյռան, ծին կքյաշի դյուս, կխեծնի, մայաթ մ'ասի շան լակի աման մոռցեր է, չի կործե, շան լակի աման կկլորվի, կուգյա կտփվի վեր պառվու գյըլխուն:

Լաճն ի, թոնի ծիյու թարքյ, որ փախի, պառավ կաքխի, կիրիշկի դեխ տուտ, որ պաց ի, ծամեր քյաշելով, քյաշքյշելով կինի լաճու իրե:

Լաճ ծիյուն կասի. - Ամա՜ն, պառավն էկավ:

Ծին կասի. - Կնա էնադեխ, մտի էնա տուն: Առ, - կասի, - մեկ սանդր, մեկ արծըլի, մեկ կոշտ աղ, մեկ փարչ ճյուր:

Լաճն ի, կէճնի, էտա հմեն էլ կառնի, կթոնի ծիյու թարքյ, կկըշի:

Պառավ կինի իրվեն, կբոռա, կասի. - Տղա, կայնի, կայնի, ես ՛էլ գյամ:

Քիչ ի մնացե, որ խասնի լաճուն, լաճ կասի. - Ամա՜ն, էկավ:

Ծին կասի. - Թա՛լ սանդր:

Սանդր կթալի, ահաքին մեշեն կկայնի տեմ: Էլմ պառավ կվազի, քիչ ի մնացե, որ խասնի:

Կասի. - Թա՛լ արծլին:

Արծլին կթալի, բիթուն կէլնի սուր տանակ: Պառավ էլմ կուտա մեչ, ոտքեր մատքեր բիթուն կճըղճղի: Էլմ կուգյա կխասնի, քիչ ի մնացե:

Կասի. - Թա՛լ կոշտ աղ:

Թալի կոշտ աղ, կէլնի ահաքին աղի սար, կայնի պառվու դեմ: Պառավ կոխըռճի, մրմռալով, աղեր կմտնի ոտաց ճղճղածներաց մեչ, էլմ կշրճի էտա սար, կուգյա, քիչ ի մնացե, որ լաճուն պռնի:

Կասի. - Ամա՜ն, պառավ էլմ խասավ:

Ծին ի կասի. - Թա՛լ փարչն իրիվանց:

Փարչ կանի, որ թալի իտվանց, կթալի հ'արճն: Կէլնի ահաքին ծով, կայնի տեմ:

Կասի. - Վա՜յ, քյո վիզ փրթնի, ընչի՞ ըսկուն արեսիր, դե տյու կահիմ կպի վեր իմ վզին, հս լողամ:

Լաճ կկպնի վեր վզին, ծին որ կմտնի մեչ, կբաշլայի լողալ, պատավ կբոռա. կասի. - Տղա, կայնի, ես էլ գյամ:

Կասի. - Մարե, մտի ճաղաց, ճաղցպան կուլ տուր, ճաղցի քյար կախի վզետ, արի:

Պառավն ի, խետ ուր մրմոին, կմտնի ճաղաց, ճաղացպան կուլ կուտա, ճաղցի քյար կկախի վզեն, կուգյա մտնի մեչ ծովուն, խեղտվի մնա դան, սատկի:

Ծին ի, լողա. ծովուց կէլնի դյուս, կասի. - Խողածին, էսա տեղ դյու կնա, զի թող պաց:

Խանի մազըմ կուտա. կասի. - Ինչ գյախ որ նեղի կմնաս, էսա մազ տու կրակ, ես կխասնեմ:

Լաճն ի, ծին կթողնի պաց, կէրթա խետ ուր հալին, ինքյն էլ կէրթա քյաղաքյ: Կէրթա կտիսնա խովիվըմ էն տեղ՝ ոխ'ջարներ կարածացուցի: Ուր խալավ խետ ինոր կտոխի, ով մէլ կառնի մոտեն, կտանի մորթի, կաշին կքյաշի վեր գյլխուն, կէրթա թակավորու տուն, կէլնի կազարած:

Մեկ օր կէրթա գյետ կլողկնա: Թակավորի ախչիյ կնստի փենջարեն, սեյր կանի, տիսնա որ ոսկի ճկոթ, ոսկի բրչամ վեր ճրի իրսին փելք կուտա:

Կուգյա օրին որ թակավորի ախչկներ պիտի փսակվեն, դալալ կկանչի. ինչ կանդար վազրի տղա կա՝ գյա թակավորու փենջարի տակիս ընցնի:

Մեծ ախչիյն մեյ խնձոր մեկ վազրի տղու գյլխու վերեն, մեյն էլ՝ մեյ վազրի լաճու կգանի, կմնա պստիյկ ախչիկ: Ինչ կանդար մարթ կուգյա՝ չի գանի: Չում չաչլիկ կուգյա, որ չաչլիկ կուգյա, խնձոր կգանի մեչ չաչլկե գյլխուն:

Քյուրեր ճետ կխանեն մեչ իրեսին. - Դյու թակավորու ախչիյ մէլնես՝ էրթաս կազարա՞ծ առնես:

Կասի. - Խա՛, ես էն կառնեմ:

Խեր որ կլսի, կասի. - Տվեյք ծեռ, թո՛ղ առնի, ջահյնըվի: Ցածրի փայխի մեկ պուճախ թո նստի, չի գյա իմ իրես:

Էն մեկելնիրն .էլ կփսակեն վեր ուրենց խավնածներաց:

Օրեն մեկ թակավոր կխիվընդնա: Կասի. - Արծվու կաթ, տրախտի խնձոր, տրախտի ճյուր պիրեքյ, որ ես ժրեմ:

Կանչի ուր փեսեքյ, կասի. - Տրախտի խնձոր, տրախտի ճյուր, արծվու կաթ որ պիրիսիքյ, զաթի ծե կթողնեմ սաղ, թի չէ՝ ծիր վիզ կգանեմ:

Կէլնեն կէրթան: Էրկու օր, իրեքյ օր, կֆռան, կֆռան, չեն կանա կնդնի, կտառնան ետ, ախու թակավորու իրես չեն էլնե:

Չաչլիկն ի, ուր կընգյան կասի. - Կնա՛ մեյ խա ծի ուզի, ես էլ էլնեմ էրթամ:

Ախչիյն ի, կէլնի կէրթա մո խեր, կասի. - Թակավոր ապրած կէնաս, մեյ խա ծի մ'էլ քյու պստիկ փեսին տուր:

Թակավոր կասի. - Կնա՛ դե, մունդառ, էն չաչալն էլ պան պիտի պիրի:

Կասի. - Աղեյկ, թակավոր ապրած կէնաս, դյու տուր, իպե՝ զաթի իպե, որ չիպե՝ տյու ինոր վիզ զարկ:

Կասի. - Կնայեքյ թառի տկի քյալախ ծին տվեքյ ինոր:

Կէրթան թառիվ տկի քյալախ ծին կուտան չաչլկեն, կխեծնի, կէրթա: Կէրթա, կես ճամբխուն մազ կուտա կրակ, ծին կուգյա, կասի. - Ուզի, ի՞նչ ի քյո ուզած:

Կասի. - Արծվու կաթ, տրախտի խնձոր, անմախութնի ճյուր:

Կասի. - Շատ աղեկ, էսա մեյ ճամբխով մ'էրթա, էնա մեկել ճամբխով կնա: Էնա ճամբախ էրթայող ետ չի տառնա: Կէրթաս, - կասի, - արծիվ բեռտ ծառի վերեն ի, նստեր ի: Ուր ոտքերայ վերեն խոյ ի խանե, մտի մեչ էն բեռտ ծառին, ուշիյմ քյո թրի ծեր տու մեչ էն խոյին, ինոր խոյ կպլի, էն գյախ կասի. «Էլի դյուս, վո՞վ ես, ուզի՝ քյու ուզած տամ»:

Ինչխ որ ծին կասի, կէրթա սկուն կանի: Կէրթա կտիսնա բեռտ ծառ, արծիվ նստե վերեն, կբոռա: Ուշիյ մ' կընցնի բեռտ ծառի մեչ, թուր կուտա ոտայ խոյին, արծիվ կբոռա:

Կասի. - Ամա՜ն, էսա էն վո՞վ էր, էլներ դյուս, ես փարան-փարան անի:

Որ ոտքեր կխովնա, կասի. - Էլի տյուս, ուզի, քյո ուզած ի՞նչ ի, տամ:

Կասի. - Կուզեմ քյու կաթ:

Կասի. - Վա՜յ, քյո ուսուցողի վիզ փրթնի: Իմ կաթ մենակ իմ ճետու տկի մեչ կդադրի, ուրիշ տկի մեչ չդադրի: Կասի. - Ամ իմ ճետ, տար էնա սարի ե՞իտն, էնտեղ մորթի, որ ծեն ես չառնեմ, տիկ խան, պե կաթ տամ, առ կնա:

Ճետն կառնի, սարի իտն կտանի մորթի, տիյ կխանի, կառնի, կպիրի: Արծիվ կաթ կլցի հինե, կառնի կէրթա: Կէրթա տիսնա, որ էտա բաջանաղներ ինգյեր են, արծվու կաթ կճարեն, կուգյա ինոնց կխարցուցի. կասի. - Ախբեր, դո՞ր կէրթաքյ:

Կասի. - Թակավոր խիվանդ ի, կէրթանքյ արծվու կաթ ճարենքյ, չի՞ս կիտե ո՞րտեղ կա:

Կասի. - Ի՞նչ տաքյ, որ ծե արծվու կաթ տամ:

Կասեն. - Ինչ որ քյու պերան կպոնի:

Կասի. - Չէ, ես մինակ կուզեմ էսա մատնկով մեյ խա դաղմա զանեմ վեր ծե ոռին:

Կիրիշկեն, մեմեկու իրես, երկու բաջանաղ, կասեն. - Պան չկա, էստեղ մարթ չկա, թո զանի:

Էն էլ դաղսա կզանի, արծվու կաթ կուտա, կտանի: Կտանի կուտա թակավորուն, թակավոր քիչըմ կառողջանա:

Էն մեկել օր կասի. - Կնայեք, տրախտի խնձոր, անմախութնի ճյուր էլ պիրեք:

Էլմ պստիյկ ախչիյ կուգյա խոր ադաճանք կենի, կասի. - Թակավոր ապրած կենաս, հ'էսօրն է'լ իմ մարթուն հրաման տա՛ս, թող երթա:

Կասի. - Մեկ կնայ, ի՞նչ արայ, մեկ երթա ի՞նչ անի, ինոր ծեռնեն պան չիգյա:

Կասի. - Աղեյկ, պան չկա, տու թող երթա, բալքիմ էսա դրյուն կընդնի:

Կասի. - Թող էլմ էն ծին խեծնի, երթա:

Էն մեկել օր չաչլիկ կէլնի, ծին կխեծնի, կէրթա: Տիսնա, որ էլմ բաջանաղներ ինգյեր են ֆռալու: Ուր խալավ կփոխի, ուր ճամբախ կշեղի, մազ կուտա կրակ, խրեղեն ծին էլմ կուգյա:

Կասի. - Ուզի՛, ի՞նչ ի կուզես:

Կասի. - Կուզեմ տրախտի խնձոր, անմախութնի ճյուր:

- Շատ աղեկ, - կասի, - ըսդրիս էսա ճամբխով կնա՛: Կէրթաս էնտեղ, - կասի, - խորոտ տրախտըմ կա, էնտեղ մեյ խա խրեղեն ծառ կա, տայն էլ հ'ախպյուրըմ կա, խասնելուն պես, - կասի, - խնձոր քյաղի, շուշեն լիս, առ վազի: Կբոռան կանչեն. տարա՞վ, տարա՞վ, իտե չաչքյես:

Չաչլիյ կէրթա, տիսնա խրեղեն տրախտըմ, պատվական ծառըմ կայներ ի, ախպյուրն էլ տակ: Կքյաղի ուզած խնձոր, շուշեն կլցի, չորս մեյ կողմիս կբոռան՝ տարա՞ն, տարա՞ն, տարա՞ն: Ոչ իտև կտառնա, ոչ էլ կիրիշկի: Կուգյա էլմ'էն ճամբխով, որ ուր բաջանաղներ կֆռին:

Կասի. - Ախպեր, էսօր ի՞նչ փտոեք:

Կասի. - Էսօր էլ տրախտի խնձոր, անմախութնի ճյուր կփտոենք:

Կասի. - Պայեք մե թմբան, վերեն էլ նշան զանեմ, ես կուտամ ծեր ուզած:

Կպանան մեյ թմբան, վերեն էլ նշան կզանի, կառնեն անմախութնի ճյուր, տրախտի խնձոր, կէրթան:

Կտանեն կուտան թակավորին, թակավոր կծրի, կէլնի կնստի: Չաչլիյն էլ խալվըներ կխանի, ուր կդայ կդնի գյլեռխ, կէրթա մտնի ոտ փագյախ:

Թակավոր կկանչի չաչլկեն, կասի. - Պերեք, որ ինոր ծեռնեն պան չի գյա, որ էն քյեռթի մարթ ի, ինչխ էկավ էլավ թակավորուն փեսա, պերեք վիզ զանենք:

Չաչլիյն ի, կէրթա թակավորու հ'առճև կկայնի, բաջանաղներն էլ թակավորու կուշտ նստույ կէլնեն:

Կասի. - Չաչլիկ, իմ էրկու փեսեք կնային զիկ արծվու կաթ, տրախտի խնձոր, անմախութնի ճյուր կընդան պիրին, ես ժրա՛, ապա դյու ընչի՞ խամար ես, որ մնայեր ես իմ տան մեչ, մկա քյու վիզ պիտի զարկվի:

Չաչլիյն էլ կվիրուցի կասի. - Թակավո՛ր ապրած կէնաս, վի՞ր մարիֆաթն էր, որ արծվու կաթ, տրախտի խնձոր, անմախութնի ճյուր էկավ քյե, վո՞վ էր քյե ժրըցուց:

Կասի. - Իմ էսա էրկու փեսեքյ:

Կասի. - Թռ մե խա ինոնց ոռեր պանան, ես իմ մատի մատնիյ դնենքյ վերեն, չափենքյ, որ էրկու կողմն էլ տուղմեն զարկիր եմ, տվիր եմ, պիրեր են:

Բաջանուղներ կիրիշկեն մեյմեկելու իրես, կկարմըրճտեն, թակավոր կիրիշկի իրսներ՝ կասի. - Պանյեքյ տիսնամ:

Թակավորու հրամանն ի, ի՞նչ անեն: Կպանան, մատնիյ կդնի վերեն, չափի, կտիսնա աղո՛րթ որ էտա մատնըկի տուղմեն ի:

- Դե, - կասի, - ջալուտներ, էսա էրկուս վերցեքյ տարե՛քյ, վզներ զարկե՛քյ, ինոնց նշան զի պիրեքյ:

Կէլնեն ջալուտներ, կտանեն մորթեն, նշան պիրեն թակավորուն:

Չաչլկեն էլ կասի. - Էսա պան որ դյու ես արե...

Նոր կտանի ուր մոտ, նոր յոթն օր, յոթ կիշեր խարսնիս կանի, ուր ախչիկ կտսակի վերեն, ուր թակավորութնի կեսն էլ կուտա ինոր: